# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

---

## Հ Ր Ա Մ Ա Ն

«28» ապրիլի 2025 թ. N 58-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 34-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ապրիլի 15-ի N INSO23-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 14-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 34-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

   1) նախաբանում «10.1-ին հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի» բառերը,

   2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի փետրվարի 10-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝

քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդարտները և համապատասխանության գնահատման սխեմաները» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել առաջին կարգի համար 12 կրեդիտ, երկրորդ կարգի համար՝ 7 կրեդիտ, իսկ երրորդ կարգի համար՝ 5 կրեդիտ:

3) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդարտները և համապատասխանության գնահատման սխեմաները» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի**

**2025 թվականի ապրիլի 28 -ի N 58-Ա հրամանի**

**Հավելված**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի**
**2025 թվականի մարտի 14-ի N 34-Ա հրամանի**

**«Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդարտները և համապատասխանության գնահատման սխեմաները»**

**միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Ապրիլի 1-11 | 18.30 11.00 | «Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդար | Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | I-ին կարգի մասնագետին շնորհվելու է 12 կրեդիտ, II-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 7 կերդիտ, III-րդ | I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ 01-31 մասնագիտություններ | I-ին կարգի մասնագետ՝ 48.000<br>II-րդ կարգի մասնագետ՝ 28.000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տները և համապատասխանության գնահատման սխեմաները» | | | կարգի մասնագետին շնորհվելու է 5 կրեդիտ | | III-րդ կարգի մասնագետ՝ 20.000 |
| 2 | Մայիսի 20-հունիսի 5 | 18.30 11.00 | «Շինարարական նյութերի ազգային ու միջազգային ստանդարտները և համապատասխանության գնահատման սխեմաները» | Բիյան Ծովինար | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | I-ին կարգի մասնագետին շնորհվելու է 12 կրեդիտ, II-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 7 կերդիտ, III-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 5 կրեդիտ | I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ 01-31 մասնագիտություններ | I-ին կարգի մասնագետ՝ 48.000 II-րդ կարգի մասնագետ՝ 28.000 III-րդ կարգի մասնագետ՝ 20.000 |